# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՎԼԱԴԻՄԻՐ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՎԼԱԴԻՄԻՐ ՄՈՎՍԻՍԵԱՆ

Համայն հայութեան սրբութիւն սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու սրտաբուխ բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ մեր ժողովրդին մատուցած Ձեր բազում ծառայութիւնների եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հանդէպ տածած Ձեր անկեղծ սիրոյ ու նուիրումի համար:

Մեծարգոյ պրն Մովսիսեան, տասնամեակներ շարունակ Դուք ամբողջանուէր սիրով ի սպաս էք դնում Ձեր կարողութիւններն ու գիտելիքները՝ ի խնդիր մեր երկրի զօրացման ու առաջընթացի եւ հաւատաւոր ժողովրդի բարօրութեան: Յատկապէս Հայաստանի համար դժուարին վերջին տասնամեակի տարիներին հայրենական կեանքի կարեւոր ասպարէզներում Ձեր բերած ծառայութիւններով Դուք արժանացել էք մեր ժողովրդի անկեղծ յարգանքին ու գնահատանքին:

Զբաղեցրած պատասխանատու բոլոր պաշտօններում Դուք մշտապէս դրսեւորել էք Ձեր որդիական սէրն ու ծառայասիրական պատրաստակամութիւնը՝ հանդէպ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին եւ լուսոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Առ Աստուած Ձեր հաւատքի եւ դէպի հարազատ ժողովուրդը Ձեր անկեղծ սիրոյ արտայայտութիւնն է Սուրբ Ամենափրկիչ մատուռը, որ կառուցուած Ձեր հովանաւորութեամբ, որպէս տուն Աստուծոյ եւ տուն աղօթից, ընդմիշտ պիտի ծառայի բարեպաշտ հայորդիներին եւ աստուածային օրհնութիւն սփռի նուիրական մեր հողին:

Մեծարգոյ պրն Մովսիսեան, բարձր գնահատանքի արժանացնելով Ձեր բազմարդիւն ծառայութիւնները մեր Մայր Եկեղեցուն եւ ժողովրդին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

**ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ**

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Վստահ ենք, որ Ձեր հարուստ փորձառութեամբ, արժանիօրէն վաստակեալ յարգանքով ու հեղինակութեամբ Դուք պիտի շարունակէք Ձեր ծառայութիւնները մեր Հայրենիքին եւ Սուրբ Եկեղեցուն:

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Բարին Աստուած, որ Իր Ամենախնամ Աջով հովանի լինի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով քաջառողջ արեւշատութիւն, գործոց յաջողութիւններ եւ ամենայն բարիք:

*«Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն»:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ Կոնդակս ի 10-ն Նոյեմբերի
յամի Տեառն 2001 եւ ի թուին հայոց ՌՆԾ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 68